ՏԵՂԵԿԱՆՔ

ԱՀ-ում 2022թ. նոյեմբերի երկրորդ տասնօրյակում դիտված օդերևութաբանական պայմանների վերաբերյալ

Նոյեմբերի 11-12-ին շրջանների զգալի մասում դիտվել են տեղումներ: Տեղումների գումարային առավելագույն քանակը կազմել է Ստեփանակերտում և Ասկերանում՝ 5մմ, Մարտակերտում՝ 4մմ, Մարտունիում՝ 2 մմ:

Օդի միջին տասնօրյակային ջերմաստիճանը Ստեփանակերտում եղել է +9.5^{0}C, նորմայից բարձր՝ 3.1^{0}C-ով, Ասկերանում՝ +9.9^{0}C, Մարտունիում՝ +11.1^{0}C, նորմայից բարձր՝ 2.9^{0}C-ով, և Մարտակերտում՝ +12.7^{0}C:

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է նոյեմբերի 18-ին Մարտունիում, նոյեմբերի 20-ին Ստեփանակերտում և Ասկերանում՝ +21^{0}C, Մարտակերտում՝ 25^{0}C:

Ամենացածր ջերմաստիճանը դիտվել է նոյեմբերի 12-14-ին և 17-ին ՝ +3... +5^{0}C:

Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանը իջել է մինչև +3.... +4^{0}C, առավելագույնը բարձրացել մինչև՝ +24....+27^{0}C:

Նոյեմբերի երկրորդ տասնօրյակում քամու միջին արագությունը հասել է 2-3 մ/վրկ, պոռթկումները մինչև՝8-9 մ/վրկ արագությամբ իսկ օդի միջին հարաբերական խոնավությունը կազմել է 67-72 %: